ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃԸՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, ք.Նոր Հաճըն, 0224 4 25 50, nor-hachn-meriya@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2024 թվականի N 110-Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻ «ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԲԱԺՆԵՄԱՍԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, հիմք ընդունելով Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան բնակավայրի 12-րդ փողոցի, 7/2 հասցեի բնակիչ Հրաչիկ Հուսիկի Մովսիսյանի դիմումը, Նոր Հաճըն համայնքի ավագանին ո ր ո շ ու մ է՝

1.Նվիրատվության կարգով օտարել.

1) Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով, 07-064-0127-0035 կադաստրային ծածկագրով, Նոր Հաճըն, գ.Քանաքեռավան 12-րդ փողոց, 7-րդ շենք, բնակելի տուն 2 հասցեի 0.04 հա մակերեսով անշարժ գույքի՝ «Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին բաժնային սեփականության իրավունքով պատկանող 1/7 բաժնեմասը նվիրատվության կարգով օտարել դիմումատու Հրաչիկ Հուսիկի Մովսիսյանին:

2) Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով՝ 07-064-0313-0034 կադաստրային ծածկագրով, Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի վարչական տարածքում գտնվող 0.1651 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության անշարժ գույքի՝ «Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին բաժնային սեփականության իրավունքով պատկանող 1/2 բաժնեմասը նվիրատվության կարգով օտարել դիմումատու Հրաչիկ Հուսիկի Մովսիսյանին:

3) Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով՝ 07-064-0312-0002 կադաստրային ծածկագրով, Նոր Հաճըն համայնքի Քանաքեռավան գյուղի վարչական տարածքում գտնվող 0.3143 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության

անշարժ գույքի՝ «Նոր Հաճընի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկին բաժնային սեփականության իրավունքով պատկանող 1/2 բաժնեմասը նվիրատվության կարգով օտարել դիմումատու Հրաչիկ Հուսիկի Մովսիսյանին:

2. Սահմանել, որ սույն որոշմամբ նշված անշարժ գույքերի բաժնեմասերը նվիրատվության կարգով դրանք տիրապետող անձին օտարելու գործընթացն իրականացնում է Նոր Հաճըն համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -0 Դեմ -15 Ձեռնպահ -2

ԱՎԴԱԼՅԱՆ ՌՈՄԱՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՄԵՆ

ԲԱԼԱՍԱՆՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ԳԱԼՍՏՅԱՆ ԱՆԻ

ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ

ԳՅՈՒԼԻՆՅԱՆ ՍԱՀԱԿ

ԹՈՐՈՍՅԱՆ ԱՐԿԱԴԻ

ԽԱՉԱՏՐՅԱՆ ՍՈՖԻԱ

ԽԱՌԱՏՅԱՆ ՄԱՐՏԻԿ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԹՈՎՄԱՍ

ՄԽԻԹԱՐՅԱՆ ԳԵՂԱՄ

ՄՈՒՐԱԴՅԱՆ ԱՆՆԱ

ՊԱՊՅԱՆ ՎԱՐԴԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՆԵՐՍԵՍ

ՕԶՆԵՑՅԱՆ ՆԱՐԻՆԵ

ՄԱԹԵՎՈՍՅԱՆ ԳԱԳԻԿ

ԻՍՊԻՐՅԱՆ ԱՆԻ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ